



2015թ –ի նոկտեմբերի 3-6-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերով նախարարության կողմից ֆինանսավորվող և CCMS-ի (« Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն » ՀԿ ) կողմից իրականացվող « Զարգացման խաչմերուկ » ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ Ալավերդի, Արևածագ, Աբրրի , Քարինջ և Ճոճկան համայնքներում ձևավորված ԵԿԱ-ի անդամների առաջին

Ֆոկուս-խմբային քննարկումները , որոնց նպատակն էր վերհանել համայնքային խնդիրները: Այդ խնդիրներից կազմվելու է բարեփոխումների պլան այսինքն, քննարկումների ժամանակ վերհանված ու բարձրաձայնված խնդիրների հնարավոր լուծման մասին առաջարկությունների փաթեթ:

Ֆոկուս -խմբային քննարկումներին հրավիրվել և մասնակցում էին տարբեր սոցիալական խմբեր ներկայացնող մասնակիցներ: Կարիքների գնահատումն իրականացվեց « Քաղաքացների ձայն և գործողություն» մեթոդաբանությամբ , որի արդյունքներում մասնակիցները վեր հանեցին բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումների վերաբերյալ բնակիչները ներկայացրեցին իրենց տեսակետներն ու առաջարկությունները: Ֆոկուս-խմբային քննարկումներն անցան բավականին բուռն ու ակտիվ, մասնակիցներից շատերը պատրաստակամություն հայտնեցին համագործակցելու ԵԿԱ-ի անդամների հետ: Առաջարկված բարեփոխումները մշակման փուլում են , որից հետո կազմվելու է առաջարկությունների փաթեթներ յուրաքանչյուր համայնքի համար , որոնք կներկայացվեն համայնքների առաջիկա հանրային լսումների ժամանակ:

